ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ՍԽԱԼ ԼՐԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀՈՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՉԵՆ ԱՐԳԵԼԱԿԻ

***Հողի գրանցման պետական ծրագրի եւ դյուրացված ընթացակարգերի գործարկումից հետո, հանրային ռեեստրում հողամասի գրանցման գործում առանձին սխալ լրացրած փաստաթղթերի պատճառով, քաղաքացիներին արգելքներ չեն հարուցվի:***

Մինչեւ բարեփոխումը, քաղաքացիները հողամասը գրանցել չէին կարողանում, քանի որ նրանց փաստաթղթերում սխալ էր լրացված անուն-ազգանունը, կային տառասխալներ կամ անհամապատասխանություններ, փաստաթղթում բացակայում էին անհրաժեշտ տվյալները (համարը, ամսաթիվը, հասցեն), ընդունման-հանձնման արձանագրությունում բացակայում էին համապատասխան քանակության իրավասու անձանց ստորագրությունները՝ կամ ձեւաթուղթը սխալ էր լրացված, կամ չէին բավարարում օրենսդրությամբ սահմանված տարբեր պահանջներին: 2016 թվականի օգոստոսի 1-ից վերոնշյալ բոլոր շեղումները սխալ չեն համարվում, եթե փաստաթղթում առկա են մնացած անհրաժեշտ տվյալները: Օրինակ, փաստաթղթի հանձնման տարեթիվը, հողամասի տարածքը կնիքով կամ իրավասու անձի ստորագրությամբ վավերացումը: Նման փաստաթղթերի պայմանները բավարար են համարվում գրանցման գործընթացի համար:




Քաղաքացու փաստաթղթերը օրինական են համարվում նաեւ այն դեպքում, եթե դրանցում բացակայում են ամսաթիվը, համարը, հասցեն, ընդունման-հանձնման արձանագրությունում բացակայում են համապատասխան քանակության իրավասու անձանց ստորագրությունները, կամ ձեւաթուղթը սխալ է լրացված, սակայն բավարարում է օրենսդրությամբ սահմանված մյուս պահանջներին: Հատկանշական է, որ նման դեպքերում, հողամասի սեփականությունը հաստատելու համար, քաղաքացին ստիպված չի լինի դիմել դատարանին, քանի որ չնայած սխալ ձեւակերպված փաստաթղթերին,, բարեփոխումների շրջանակներում, ներկայացված փաստաթղթերն էլ բավական են գրանցման հիմնավորման համար:

Բացի այդ, քաղաքացին, որը տարիներ առաջ գնել է հողամասը, սակայն պայմանավորվածությունը եղել է բանավոր կամ գրավոր, պայմանագիրը ձեւակերպվել է առանց նոտարի կամ հանրային ռեեստրի ազգային գործակալության միջնորդությամբ, ինչի պատճառով էլ գրանցումը չէր իրականացվում, հետայսու այդ քաղաքացիներին տրվում է իրավունք՝ բարեփոխման շրջանակներում դիմել նոտարին կամ հանրային ռեեստրի ազգային գործակալությանը, պայմանագրի անվճար ձեւակերպման եւ հողամասի դյուրացված գրանցման համար:

Ինչպես հայտնի է, օգոստոսի 1-ին մեկնարկեց բարեփոխումը, ըստ որի, դյուրացվում է հողատարածքի գրանցումը, եւ այն քաղաքացիների համար դարձնում առավելագույնս մատչելի: Բարեփոխման նպատակն է՝ վերացնել այն բարդությունները, որոնք ծագում են հողի սեփականատերերի առջեւ գույքի գրանցման գործընթացում: Օրենքի համաձայն, հողատարածքի գրանցման ընթացակարգերը դյուրացվել են, վերացվել արգելքները, որոնք ծագում էին հողի սեփականատերերի առջեւ, իսկ գրանցման գործընթացը խրախուսվել է: Իրականացված բարեփոխումը կողմնորոշված է անշարժ գույքի գրանցման ընթացակարգերի դյուրացմանն ու սեփականության իրավունքների պաշտպանությանը:

Հողամասի գրանցման համար քաղաքացիները կարող են դիմել արդարադատության տներին, հանրային ռեեստրի ազգային գործակալության տարածքային ծառայություններին եւ հասարակական կենտրոններին: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող են կապվել թեժ գծին՝ 2 405 405, info@napr.gov.ge էլեկտրոնային փոստով կամ հանրային ռեեստրի ազգային գործակալության facebook-ի պաշտոնական էջին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ՋԱՎԱԽԵԹԻԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻՍՏՆԵՐԸ ԽԱՂԱՐԿԵՑԻՆ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹԸ»



***Շուրջ 5 տարվա կենսագործունեության պատմություն ունի Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ընդհանուր կրթության աջակցման «Ընթացիկ ծրագրերի» «Դպրոցական նախաձեռնություններ» ենթածրագիրը: Ենթածրագրի նպատակն է դպրոցական նախագծերի ֆինանսավորմամբ՝ սատարել աշակերտակենտրոն ուսումնական գործընթացի եւ դպրոցական միջավայրի զարգացմանը: Ասենք նաեւ, որ այդ գործընթացին ակտիվ մասնակցություն են բերում Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի հայկական դպրոցների աշակերտներն ու ուսուցիչները:***

Հոկտեմբերի 12-ին Ախալքալաքիում կայացավ սեղանի թենիսի մարզաձեւի «Բարեկամության գավաթ» մրցույթը, որին հյուրընկալող Ախալքալաքիի թիվ 5 հանրային դպրոցից բացի, մասնակցում էին Ասպինձայի շրջանի Դամալայի, Ախալցիխեի շրջանի Սխվիլիսիի, Ախալքալաքիի շրջանի Արագվայի հայկական, նաեւ Ախալքալաքի քաղաքի թիվ 3, Ախալցիխե քաղաքի թիվ 1 եւ թիվ 5 վրացական դպրոցների 6 հոգուց բաղկացած՝ աշակերտ-ուսուցիչ-ծնող կազմով թիմերը: Մրցույթի կանոնակարգը նախապես ուղարկվել էր մասնակիցներին:

Տոնական օրվա հյուրերն էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության սպորտի փորձագետ Գիա Բեգիաշվիլին, ազգային փոքրամասնությունների լեզուների խմբի համակարգող Դեստինե Քոհավան, տողերիս հեղինակը, Ախալքալաքիի ռեսուրսկենտրոնի պետ Թերեզա Չիվչյանը, մունիցիպալիտետի մշակույթի գծով մասնագետ Վիտալի Ստելմաշովը, երիտասարդության, սպորտի հարցերով մասնագետ Հ.Ամիրբեկյանը, աշուղ Ա.Քսպոյանը, նկարչական դպրոցի տնօրեն Կ.Կարապետյանը, պատմաբան Վ.Ռստակյանը, Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանը:

Միջոցառման սկիզբը ազդարարվեց Վրաստանի եւ Հայաստանի օրհներգերով:

Թիվ 5 դպրոցի տնօրեն Էմմա Նահատակյանի ողջույնի եւ նախարարությանն ուղղված երախտագիտության խոսքին հաջորդեցին գեղարվեստական համարներ՝ հինգերորդ դասարանի աշակերտներ Անի Ամիրբեկյանի, Խաչատուր Այվազյանի մասնակցությամբ: Այնուհետեւ սկսվեց սպասված մրցույթը:

Խաղի ողջ ընթացքում չէին դադարում կողմերի երկրպագուների վանկարկումներն ու ուրախ ճիչերը: Խաղարկման առաջին եւ երկրորդ փուլերում հաջողություն գրանցեցին եւ եզրափակիչ դուրս եկան Դամալայի, Արագվայի, Սխվիլիսիի եւ Ախալցիխեի թիվ 5 դպրոցների թիմերը: Բավականին հետաքրքիր ու անզիջում պայքարի արդյունքում, առաջին հորիզոնականը զբաղեցրեց Արագվայի հանրային դպրոցի աշակերտ-ուսուցիչ-ծնող հավաքական թիմը: Մրցույթում երկրորդ տեղը զբաղեցրեց Դամալայի, երրորդը՝ Ախալցիխեի թիվ 5 եւ չորրորդը՝ Սխվիլիսիի դպրոցը:

Ավարտին տեղի ունեցավ մրցանակաբաշխության հանդիսավոր արարողություն: Ձեռնարկը կարեւորեցին եւ հաղթողներին ու մասնակիցներին շնորհավորեցին Գիա Բեգիաշվիլին, Թերեզա Չիվչյանը, Դամալայի դպրոցի տնօրեն Նելի Դուդուկչյանը, այլոք:

Մարզաձեւի մրցաշարի կազմակերպմանը օժանդակել էին Վրաստանի սեղանի թենիսի եւ դպրոցական սպորտի ազգային ֆեդերացիանները:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***
***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ***

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

# ԻՆՉՊԻՍԻ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ ՃՈՒՑԱԲԵՐԵՑ ՀԱՅ ՏԵՐՏԵՐ ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ԳՈՐԻԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



***Այս ընտրությունների ժամանակ է՛լ ավելի սրվեց հայրենասիրական զգացումը եւ առավել սրտին մոտ ընդունվեցին Ակակիի, Իլիայի, Իակոբի եւ մյուս մեծերի ասածները: ...Աստված իմ, ի՞նչ տառապանքով էին նրանք գրում ազգի ցավի, պատմության արժանի գործերի, հազար ու մի կարիքի մասին... Եվ գովաբանումները չէին վերաբերում միայն վրաց հերոսներին ու ազգի անձնազոհ զավակներին, չէին մոռացվում նաեւ այլազգի զավակները, որոնց խորին երախտագիտություն էին հայտնում:***

Իակոբ Գոգեբաշվիլին հենց նման մեծերից մեկն էր: Ահա թե ինչ չմոռացավ նա հիշատակել, երբ նկարագրում էր Թեւդորե քահանայի հերոսությունը:

Սուրբ Թեւդորեի վերաբերյալ վրաց ընթերցողը բավականին քաջատեղյակ է, սակայն, շատ հաճախ մինչեւ վերջ չէր ընթերցել մեծ Իակոբի տեքստը, նվազ ուշադրություն էր դարձրել նրա վրա, թեպետ...

...Գորին չէր սպասում թուրքերի զորքին եւ ապրում էր խաղաղ կյանքով:

Սակայն թշնամին անսպասելիորեն հայտնվեց քաղաքի մոտ, եւ հենց այդտեղ էլ տեղի ունեցավ երկրորդ հերոսությունը:

Հենց այստեղ էլ թուրքերին արգելակիչ դարձավ երկրորդ հոգեւոր անձը:

Թուրքական բանակի ներխուժման մասին, որն իրականում անսպասելի էր, Գորիում բացարձակապես տեղեկություն չունեին: Հենց այդ պատճառով հայ հոգեւորական Սաակաշվիլին (Սահակյանցը) Գորիից ուղեւորվում էր Դուխսի գյուղ, որտեղ վրացիների հետ միասին ապրում էին նաեւ հայեր, եւ նա նրանց հոգեւոր առաջնորդն էր: Երբ Սաակաշվիլին բարձրացավ հարաթավայրը շրջափակող բարձունքին, նրա աչքի առջեւ բացվեց սարսափելի տեսարան՝ գրեթե ողջ տարածքը, լեռներն ու Քուռ գետի միջնահատվածը զբաղեցված էր թուրքական վիթխարի բանակով: Սարսափած հոգեւորականը իր ձիու գլուխը հետ դարձրեց, խթանեց եւ սլացավ Գորիի կողմը, առանց ընթացքը դադարեցնելու թափով մխրճվեց ամբոխի մեջ, ցատկեց ձիուց եւ գոռաց. «Փրկվեցե՛ք, կամուրջը քանդեք, ահա, թշնամու զորքն է գալիս»: Եվ դրա հետ մեկտեղ, ձեռքը գցեց կամրջի ճաղաշարքին: Բարեբախտաբար, հենց կամրջի վրա էին գտնվում գյուղացիները, նրանք, ողջ ուժով ցնցելով կամրջի հենասյուները, սկսեցին այն արագ քանդել: Երբ կարճ ժամանակ անց թուրքերը մոտեցան կամրջին, այն արդեն քանդված էր:

...Ու փրկվեց Գորին: Հայ հոգեւորականի հերոսությունը փրկեց վրացական սիրտը, եւ այդ սիրտն երբեք չի մոռանա հայ տերտեր Սաակաշվիլու անունը:

Երանի՜ այսօր էլ ունենայինք նրա նման հայ տերտերներ:

***ՋԱՋԱ ՓԻԼՓԱՆԻ***
***«Սաքարթվելոս Ռեսպուբլիկա», 8 հոկտեմբերի, 2016 թվականի***

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ✵ ²ÚÈ²¼²Ü ✵ ÊàðÐàôðô¸Üºð

² è àÔæ ² ä ²ÐàôÂÚàôÜ

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԹԵՐՔՆԵՐ

***Լսել եմ, որ կան առանձին մթերքներ, որոնք նպաստում կամ՝ հակառակը, վնասում են այս կամ այն օրգանի նորմալ ֆունկցիան: Ցանկալի կլիներ իմանալ այդ մթերքների մասին:***

***Ա.Վարդանյան***

***Մառնեուլի***



Իրոք, նման մթերքներ կան: Ստորեւ ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

**Ուղեղի համար** – Սաղմոն, թյունոս, սարդինա, ընկույզ: Ընկույզում պարունակվող կենսաբանական ակտիվ նյութերն օգնում են թուլացնել նյարդային լարվածությունը՝ բարելավելով հիշողությունը եւ ուղեղի աշխատանքը: Հատկապես թվարկված ձկնատեսակները պարունակում են օմեգա-3 ճարպաթթու, որը մասնակցում է գլխուղեղի նյարդային բջիջների ձեւավորմանը:

**Թոքերի համար** - Բրոկոլի, բրյուսելյան կաղամբ: Կաղամբի այս տեսակներում պարունակվում է NRF-2 գենը, որը պաշտպանում է թունավոր նյութերից թոքերի բջիջները վնասվելուց:

**Մաշկի համար** - Մուգ գույնի հատապտուղներ (հապալաս), կանաչ թեյ: Մուգ հատապտուղները եւ կանաչ թեյը հարուստ են հակաօքսիդիչներով, որոնք օգնում են հաղթահարել մաշկի հետ կապված խնդիրները:

**Մկանների համար** - Բանան, կարմիր միս, ձու: Բանանում առկա ածխաջրերը նպաստում են մկանային զանգվածի առաջացմանը: Կարմիր միսը կերատինի բնական աղբյուր է, որը նույնպես նպաստում է մկանային զանգվածի ավելացմանը: Մկանների զարգացման համար խորհուրդ ենք տալիս ձու ուտել, քանի որ այն սպիտակուց է պարունակում:

**Աչքերի համար** - Եգիպտացորեն, դեղձ: Աչքի ցանցաթաղանթում չնչին քանակով ոսկի կա: Այդ քանակը պահպանվում է սննդի միջոցով: Իսկ եգիպտացորենը պարունակում է հենց այդ տարրը: Սուր տեսողության համար պետք է պարբերաբար դեղձ ուտել, քանի որ այս մրգի բաղադրության մեջ առկա են կալիում, ֆոսֆոր եւ կալցիում, նաեւ՝ մեծ քանակով կարոտին, որը լավացնում է գիշերային տեսողությունը եւ նույնիսկ կանխարգելում է կատարակտի առաջացումը:

¸ ²ê Î ²ð ² Î àôÂÚàôÜ



## ԱՆՈՒՂՂԵԼԻ ՉԱԽՈՂԱԿ

***Երեխաս հաճախում է երաժշտության դասերի, ուսուցչի մոտ անհատական անգլերեն է պարապում, թենիսով զբաղվում... Սակայն նկատել եմ, որ ամեն ինչի նկատմամբ անտարբեր է, հանձնարարություններն էլ իմիջայլոց է կատարում: Շատերն ասում են՝ լինում են նման չախողակ երեխաներ: Չգիտեմ՝ ինչպես վարվել:***

***Ե. Գրիգորյան***

***Թբիլիսի***

Ծնողները հաճախ, իրենց երեխայի համար լավագույն ապագա երազելով, նրան պարի ստուդիա, երաժշտական դպրոց, մարզական պարապմունքների են տանում, առանձնակի ուշադրություն չդարձնելով, թե իրականում երեխային ինչն է հետաքրքրում, նա ինչ հակումներ ունի: Արդյունքում, փոքրիկը մեծ ջանքեր չի ցուցաբերում պարտադրված ուղղության մեջ հաջողության հասնելու համար, ինչն էլ ծնողների դժգոհությունն է առաջացնում: Նրանք երեխային հիմար են անվանում, ասում, որ նրանից ոչինչ դուրս չի գա: Բայց այդպիսի որակումները դժվար թե երեխայի համար խթան հանդիսանան ինքնակատարելագործման ճանապարհին: Մանկական հոգեբանությունն այնպիսին է, որ հավատում է ծնողների ասածների ճշմարտացիությանը: Այդ տարիներին փակցված պիտակները տարիքի հետ ավելի խոր արմատներ են գցում եւ խոչընդոտում ինքնազարգացմանն ու կայացմանը: Դա անուղղելի ձախողակի վերածվելու ամենահավաստի ճանապարհն է:

ՉԱՐՄԱՆՀՐԱՇ ԱՇԽԱՐՀ

## ԻՐՈՔ, ՍԵՐԸ ՏԱՐԻՔ ՉԻ ՀԱՐՑՆՈՒՄ

***Չինաստանում տեղի է ունեցել 114-ամյա չինուհու եւ 71-ամյա տղամարդու հարսանիքը: Այդ մասին հայտնել է Cina պորտալը:***

Ամուսնության արարողությունը կայացել է Չինաստանի Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանի Կաշգար օկրուգի Բաչու գավառում:

Ինչպես հայտնում է փեսացուն, ինքը իր սիրեցյալի համաձայնությանը ձգտել է հասնել մեկ տարուց ավելի: Նրա խոսքով, իրենք ծանոթացել են ծերանոցում: Տղամարդն ասել է, որ սկզբում իրեն դուր էր գալիս ապագա կնոջ պատրաստած կերակուրները: Ավելի ուշ, նա հասկացել է, որ իրեն դուր եկած կինը «նաեւ շատ լավ մարդ է»:

Ինչպես նշում է պորտալը, կինը քանիցս մերժել է տղամարդուն, բայց վերջինս չի դադարել սիրատածել կնոջը: Ի վերջո, կինը համաձայնել է հարսանիք անել, եւ նրանք գրանցել են իրենց հարաբերությունները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՆՍՏԵԼԱՏԵՂԸ

***Ներկայումս կարելի է վստահորեն ասել, որ մեքենան պերճանքի առարկա չէ, այն առօրեական անհրաժեշտություն է: Եվ զարմանալի չէ, որ շատերի համար մեքենա ունենալը դարձել է անհրաժեշտություն, կենսական նվազագույնի ապահովման աղբյուր: Եվ դրա համար վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո, ստիպված՝ նստած են լինում ղեկի առջեւ՝ ապահովելու այդ կենսական նվազագույնը:***

Ստորեւ ներկայացնում ենք մասնագիտական խորհուրդներ այն մասին, թե, ավելորդ հոգնությունից, ողնաշարի եւ կոնքի հետ կապված հիմնախնդիրների կանխման համար, ինչպես պետք է կարգավորել ավտոմեքենայի նստելատեղը:

Ցանկացած՝ նույնիսկ ամենակարճ, ուղեւորություն սկսվում է ղեկի մոտ ճիշտ նստելուց:

Արդեն դրանից է կախված ոչ միայն վարորդի հարմարավետն ու ուշ հոգնելը, այլեւ առողջությունն ու անվտանգությունը:

Բնականաբար, յուրաքանչյուր մարդու խիստ հաճելի է ազատ նստել փափուկ բազկաթոռին, սակայն վարորդական նստելատեղին պետք է վերաբերվել իբրեւ աշխատանքային տեղի:

Եվ, առհասարակ, շատ ավելի հարմար է վարել մեքենան ճիշտ հարմարեցված նստելատեղով:

**Ստորեւ մենք կքննարկենք ժամանակակից մեքենաների նստելատեղերի հիմնական կարգավորումները.**

* նստելատեղի երկայնական դիրքի կարգավորում,

* նստելատեղի թիկնակի թեքության կարգավորում:

Կան նաեւ լրացուցիչ կարգավորումներ, որոնք, սակայն, ոչ միշտ են պետք գալիս կամ ոչ բոլոր մեքենաներում են հանդիպում:

Դրանք են՝

* նստելատեղի բարձիկի բարձրության կարգավորում,

* նստելատեղի բարձիկի թեքության անկյան կարգավորում,

* գոտկատեղային աջակցման կարգավորում,

* նստելատեղի երկայնական դիրքի կարգավորում:

Կիպ նստեք վարորդական բազկաթոռին. այնպես, որ ողնաշարը սեղմված լինի թիկնակին: Մինչեւ վերջ սեղմեք հպարգելման ոտնակը: Ճիշտ կարգավորման դեպքում, ոտքը պետք է մի փոքր ծալված լինի ծնկի հատվածում. այն չպիտի հասնի ոտնակին՝ ոտնաթաթի մատներով, բայց նաեւ շատ ծալված չպիտի լինի:




Եթե ձեր մեքենան ավտոմատ փոխանցման տուփով է, ապա աջ ոտքով հերթով սեղմեք արգելակման եւ գազի ոտնակները: Նստելատեղի այնպիսի դիրք փորձեք գտնել, որ ձեզ հարմար լինի ոտքով սեղմել, բայց նաեւ կրունկը հատակից չպոկել:

Կա մեկ այլ տարբերակ եւս:

Ձախ ոտքով հենվեք հատակին՝ արգելակման ոտնակից ձախ. այնտեղ, որտեղ սովորաբար լինում է հպարգելման ոտնակը (մեխանիկական փոխանցման տուփով ավտոմեքենաներում): Ինչպես առաջին դեպքում՝ ծունկը պետք է մի փոքր ծալված լինի: Հնարավորինս շատ առաջ մի եկեք. մեքենայի դիմածածկոցի առջեւի հատվածը դուք, միեւնույն է, չեք տեսնի, իսկ ղեկանվում «թաքնված» անվտանգության բարձիկներից ցանկալի է հեռու մնալ:

Որքան քիչ ծալված լինեն ձեր ոտքերը, այնքան հեշտ կկարողանաք կառավարել ոտնակները:

Այդ դիրքում որովայնն ու ազդրերը չպիտի դիպչեն ղեկին: Իսկ եթե դրանից խուսափել հնարավոր չէ, ապա ստիպված եք կա'մ ավտոմեքենան փոխել, կա'մ շտապ նիհարել:

**Նստելատեղի թիկնակի թեքությունը**

Թիակները կիպ սեղմելով նստելատեղի թիկնակին՝ մեկնած ձեռքը դրեք ղեկի վերեւի հատվածում: Եթե այս դիրքում ձեր ձեռքի դաստակը դիպչում է ղեկանվի օղագոտուն, ուրեմն նստելատեղի թիկնակը ճիշտ է կարգավորված:

Ի դեպ, աշխատեք նստել ոչ թե կորացած, այլ մի փոքր ետ թեքված: Ցանկալի է նստել հնարավորինս խորը՝ ձգված դեպի թիկնակի ու նստելատեղի անկյունը:

Իսկ եթե ձեր մեքենայի նստելատեղը թույլ է տալիս գոտկատեղային աջակցման կարգավորում, ապա գոտկատեղի հատվածում ողնաշարի փոքրիկ կորացում ստացեք:

**(Շարունակելի)**

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Երբեմն մի պտղունց բարությամբ կարելի է չարության մի բլուր փլցնել:

***ԹԱԹՈՒԼ ԱԼԹՈՒՆՅԱՆ***
***(1901-1973)***
***Հայ երաժշտական-հասարակական գործիչ, ԽՍՀՄ ժող. արտիստ***

Քաջությունը ի՞նչ է, թե ոչ՝ դիմանալը ամեն ցավի:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց դասական***

Մենք երբեք չենք կարող ճշգրտորեն իմանալ, թե ինչ է մտածում կամ զգում մեկ ուրիշը: Մենք պարզապես մեկնաբանում ենք նրա վարքը ըստ մեզ եւ վիրավորվում այդ առնչությամբ մեր գլխում ծագած մտքերից:

***ՄԻԽԱՅԵԼ ԲՈՒԼԳԱԿՈՎ***
***(1891-1940)***
***Ռուս նշանավոր գրող***

Տխմարության դեմ օրենքներ չկան:

***ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆ***
***(1866-1944)***
***Ֆրանսիացի դրամատուրգ***

Ամենազորեղ զգացմունքը հիասթափությունն է: Վիրավորանքից, խանդից եւ նույնիսկ ատելությունից հետո, հոգում ավերակներ են մնում, իսկ հիասթափությունից հետո դատարկություն:

***ԷՐԻԽ ՄԱՐԻԱ ՌԵՄԱՐԿ***
***(1898-1970)***
***Գերմանացի գրող***

Կարիք չկա մարդկանցից վիրավորվել, որ իրենց հետ կապված մեր հույսերը չեն արդարացրել: Մենք՝ ինքներս ենք մեղավոր, որ նրանցից սպասել ենք շատ ավելին, քան պետք է սպասեինք:

***Ա.ՂԱԶԱՐՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü º Î ¸ àî Ü º ð

*☺ Տղեն հորը հարցնում է.*

*- Պապ, էս տռուսիկի թարսն ու շիտակը ո՞նց հասկանամ:*

*- Տղա ջան, քանի՞ անգամ ասեմ, դեղինը՝ դեմը, կառշնըվինը՝ հետեւը:*

*☺ Առավոտյան տարեց ամուսինները միասին նախաճաշում են: Կինը, երկար նայում է ամուսնուն ու հարցնում.*

*- Թանկագինս, ինձ նախկինի նման սիրո՞ւմ ես:*

*- Տեր Աստված, քեզ ամենօրյա կռիվները չեն ձանձրացրե՞լ:*

*☺ Կինը՝ ամուսնուն.*

*- Ի՞նչ հիմար էի, որ համաձայնեցի քեզ հետ ամուսնանալ:*

*- Ես էլ այնքան էի տարված քեզանով, որ դա չնկատեցի:*

*☺ Երեխան հորը.*

*- Հայրի'կ, մաման ինչո՞ւ է հարկավոր:*

*- Է՜հ, որդիս, որ դառն իրականությունը չմոռանանք:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 14-ին, Երեւանում աշխատանքն սկսեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանը, որին մասնակցում են Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւ, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, ինչպես նաեւ` Ղազախստանի վարչապետ Բակիջան Սագինտաեւը:*




Նստաշրջանը վարեց, կազմակերպության Հավաքական անվտանգության խորհրդում 2015-2016թթ. նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում նախագահություն ստանձնած, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Նստաշրջանում օրակարգում են ՀԱՊԿ նախորդ տարվա գագաթնաժողովների որոշումների իրականացման ընթացքի, ինչպես նաեւ Կազմակերպությունում նախագահության ընթացքում Հայաստանի կողմից առաջադրված առաջնահերթությունների հարցերը:

Նիստի օրակարգում ընդգրկված երկու տասնյակ հարցերի շրջանակում ընդգրկված են միջազգային իրավիճակը եւ հավաքական անվտանգության ապահովման արդիական հարցերը, մինչեւ 2025 թվականը ժամանակահատվածի համար ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարության եւ ՀԱՊԿ ճգնաժամային արձագանքման կենտրոնի ստեղծման վերաբերյալ որոշումների նախագծերը, ՀԱՊԿ գործունեության կատարելագործման, ինչպես նաեւ միջազգային ահաբեկչությանը հակազդեցության վերաբերյալ որոշումների իրականացումը:

Նախատեսվում է մի շարք քաղաքական հայտարարությունների ընդունում: Նիստում ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարները որոշում կկայացնեն նաեւ Կազմակերպության գլխավոր քարտուղարի վերաբերյալ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ




*Հոկտեմբերի 9-ից Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եռօրյա աշխատանքային այցով գտնվում էր ԱՄՆ-ում` մասնակցելու Նյու Յորքում` հոկտեմբերի 10-ին, մեկնարկած «Հայաստան» ներդրումային համաժողովին, որին հրավիրված են տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող առաջատար ընկերություններ, միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ, փորձագետներ եւ շուրջ հարյուր միջազգային ներդրողներ:*

Հայաստանի նախագահը համաժողովի առաջին` լիագումար նիստում, որն անցկացվել է «Հայաստանը` որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրի ներքո, հանդես եկավ ելույթով` անդրադառնալով Հայաստանի ներկա տնտեսական եւ քաղաքական առաջնահերթություններին, քառորդդարյա անկախությունից հետո Հայաստանի ձեռքբերումներին, երկրի մրցակցային առավելություններին ու ներդրումային հնարավորություններին, իրականացվող լայնածավալ բարեփոխումներին, բարենպաստ գործարար միջավայրին, տարածաշրջանային շուկաներ` Հայաստանի միջոցով մուտքի դյուրինությանը եւ` մակրոտնտեսական կայուն միջավայրին:

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Նախագահ Սերժ Սարգսյանը, Նյու Յորքում կայացած ներդրումային համաժողովի շրջանակներում, մի շարք երկկողմ հանդիպումներ է ունեցել:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆՑԻ 23 ՈՒՍԱՆՈՂ

*Հայաստանի բարձրակարգ ուսումնական հաստատություններում, հոկտեմբերի 1-ից, ուսումնառություն է սկսել 550 սփյուռքահայ եւ 420 օտարազգի ուսանող: Հայաստանի միջին մասնագիտական հաստատություններ դիմել է 70 սփյուռքահայ:*

Վրաստանից Հայաստանի բուհեր դիմել էր 23 դիմորդ, Ռուսաստանից` 170, Իրանից` 190, Հնդկաստանից` 220 եւ Սիրիայից` 90: Կան ուսանողներ նաեւ Բրազիլիայից, Իրաքից, Չինաստանից, Գերմանիայից, Հունաստանից, Իսրայելից, ԱՄՆ-ից, Տաջիկստանից, Թուրքմենստանից, Ուրուգվայից, Շվեդիայից, Ռումինիայից, Ուկրաինայից, Թուրքիայից: Թուրքիայից ժամանած 4 դիմորդներն ազգությամբ հայեր են` ՀՀ քաղաքացիների երեխաներ: Նախորդ երկու տարվա համեմատությամբ` դիմորդների քանակը էապես չի աճել կամ նվազել:

ԱՊՀ երկրներից Հայաստանում իրենց կրթությունը շարունակողներից շատերը հաճախ հաստատվում են Հայաստանում եւ շարունակում իրենց գործունեությունը:

## ԱՃԵԼ Է ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ

*Այս տարվա առաջին կիսամյակում` Հայաստան է ժամանել 501118 զբոսաշրջիկ, ընդ որում, նրանց 26,3 տոկոսը եկել է ԱՊՀ երկրներից, 23,4 տոկոսը` ԵՄ երկրներից եւ 50,3 տոկոսը` այլ երկրներից:*

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, հունվար-հունիսին Հայաստան այցելած զբոսաշրջիկների 22,3 տոկոսը ժամանել է ՌԴ-ից, 17,8 տոկոսը` Իրանից, իսկ 10,1 տոկոսը` ԱՄՆ-ից: 2015թ. հունվար-հունիսի համեմատ, Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 2,4%-ով: Ժամանողների 31,6 տոկոսն այցելել է գործնական նպատակով, 47 տոկոսը` հանգստի եւ ժամանցի, 0,4-ը` բուժման, իսկ այլ նպատակների համար այցելել է ժամանողների 20,9 տոկոսը:

2016թ. հունվար-հունիսին, զբոսաշրջության նպատակով, Հայաստանից մեկնել է 470693 մարդ կամ, 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ, ցուցանիշն աճել է 1,2%-ով: Ներկայացվող ցուցանիշներից պարզ է դառնում, որ, 2016 թվականի հունվար-հունիսին, Հայաստանից ինքնուրույն մեկնել է 466444 մարդ եւ միայն 4249 մարդ` զբոսաշրջային գործակալությունների միջոցով. վերջին ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 83,9 տոկոսով: Մեկնողների 6,7 տոկոսը հետապնդել է գործնական, 86,6-ը` հանգստի ու ժամանցի եւ 6,7 տոկոսը` այլ նպատակներ:

### ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

***Ղազախսփանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, մրսածության պափճառով, չի կարողանա այցելել Ադրբեջան եւ Հայասփան: Բաքու այցելությունը նախափեսված էր հոկփեմբերի 12-ին, իսկ Երեւան` հոկփեմբերի 13-14-ը:***

***Նազարբաեւը պլանավորում էր պաշփոնական այցով ժամանել Հայասփան, ինչպես նաեւ մասնակցել Հավաքական անվփանգության պայմանագրի կազմակերպության Հավաքական անվփանգության խորհրդի` հոկփեմբերի 14-ին նշանակված հերթական նսփաշրջանին` պեփությունների ղեկավարների մակարդակով:***

### ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է

***Ռուսասփանը կշարունակի զարգացնել ռազմափեխնիկական համագործակցությունը Հայասփանի հեփ, Երեւանում ArmHiTec-2016 ցուցահանդեսում կներկայացվեն ռուսական ռազմական փեխնիկայի լավագույն նմուշները:***

***Նշենք, որ Զենքի եւ պաշփպանական փեխնոլոգիաների ArmHiTec-2016 առաջին միջազգային ցուցահանդեսը Երեւանում անցկացվում է հոկփեմբերի 13-ից մինչեւ 15-ը: Ցուցահանդեսում Ռուսասփանը կներկայացնեն 16 ձեռնարկություններ, որոնք պոփենցիալ պափվիրափուներին կցուցադրեն ժամանակակից զրահափանկային, հրթիռահրանոթային սպառազինություն ու փեխնիկա, «Ուրան» ընփանիքի ռոբոփափեխնիկական համալիրներ, ռազմական ավիացիա, հրաձգային զենք ու զինամթերք:***

***Բացի այդ, ռուսական ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները ArmHiTec-2016-ում կցուցադրեն նորագույն անօդաչու թռչող սարքեր ու համալիրներ, կապի միջոցներ, զորքերի կառավարման ավփոմափացված համակարգեր, հսկման եւ անհափական պաշփպանության միջոցներ, լազերային, փեղեկափվական ու հեռահաղորդակցական փեխնոլոգիաներ, փեղեկափվության պաշփպանության համակարգեր, հանդերձանք, բժշկական ապահովման միջոցներ:***

### ՀԱՅԱՍՏԱՆԸ` ԱՄԵՆԱՑԱԾՐ ՊԱՐՏՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ

***Հայասփանը շարունակում է մնալ աշխարհի ամենացածր պարփքային բեռ ունեցող երկրներից մեկը: Թեպեփ մփահոգիչ է պեփական բյուջեի ծախսերի վրա պարփքի սպասարկման ճնշման փասփը` եթե պեփական բյուջեի ծախսերի մեջ 2-2.5 փոկոսն էր ուղղում պարփքի փոկոսավճարներին, հիմա այդ փոկոսն աճել ու հասել է մինչեւ 8.7-ի:***

***2016 թվականի սեպփեմբերի դրությամբ` Հայասփանի պեփական պարփքը կազմել է 5.6 միլիարդ ԱՄՆ դոլար, Կառավարության պարփքը` 5.1 միլարդ ԱՄՆ դոլար, իսկ Կենփրոնական բանկի պարփքը` 0.5 միլիարդ դոլար:***

## «ԱՐԱՐԱՏ 73»-Ի ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Հայկական ֆուտբոլի լեգենդները` «Արարատ 73»-ի ֆուտբոլիստները, մեծ հիացմունքով եւ հուզմունքով մասնակցեցին «Արարատ 73»-ի հաղթանակներն անմահացնող արձանախմբի բացմանը:*



Հոկտեմբերի 10-ին, Երեւանի «Հրազդան» մարզադաշտին հարող տարածքում, բացվեց «Արարատ 73»-ի հաղթանակներն անմահացնող արձանախումբը:

Արձանախմբի բացմանը ներկա էին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը, Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, հայկական ֆուտբոլի լեգենդները` «Արարատ 73»-ի ֆուտբոլիստները:

«Մենք հավերժացրեցինք «Արարատ 73»-ի հաղթանակները: Սա մեր հաղթանակն է, հպարտությունն է  եւ պատմությունը: Մենք մեզ ավելի հզոր ենք զգում` տեսնելով ձեր հաղթանակները»,-դիմելով ներկաներին` ասաց ՀԱՕԿ նախագահը:

«Արարատ 73»-ի հաղթանակներն անմահացնող արձանախմբի ճարտարապետը Տիգրան Բարսեղյանն է, իսկ քանդակագործների խումբը ղեկավարել է Արմեն Սամվելյանը: Այն ստեղծվել է ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի անձնական միջոցների շնորհիվ:

**Լեւոն Իշտոյան.** Ես անկեղծորեն տպավորված եմ: Կցանկանայի իմ խորին շնորհակալությունը հայտնել Գագիկ Ծառուկյանին, ով կառուցեց այս գեղեցիկ արձանախումբը: Սա միայն մեր հաղթանակի մասին պատմող արձան չէ` սերնդափոխությունից հետո երեխաները կցանկանան եւ կձգտեն դառնալ աշխարհի օլիմպիական չեմպիոններ:

**Սերգեյ Բոնդարենկո.** Մեզ համար միայն հպարտություն է նման արձան ունենալը: Շնորհակալություն հայ ժողովրդին, Գագիկ Ծառուկյանին: Սա միայն մեծարում չէ, «Արարատ 73»-ը անմահացավ: Իմ կարծիքով` նման հաղթանակներ Հայաստանը դեռ երկար չի ունենա:

**Խորեն Հովհաննիսյան.** Ինձ բախտ է վիճակվել խաղալ «Արարատ 73»-ի ֆուտբոլիստների հետ, իսկապես հրաշալի թիմ էր հավաքվել: Ուզում եմ շնորհավորել նրանց` արձանախմբի բացման կապակցությամբ եւ շնորհակալութուն հայտնել Գագիկ Ծառուկյանին` արձանի ստեղծման համար: Եվ երանի գան տարիներ, որ Հայաստանի հավաքականը էլ «Արարատ»-ի խաղի պես որակով խաղ ցույց տա:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



*17.10.2016. Ղուն-կիանոս Հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը եւ Հովսեփ Աստվածահորը, Հովսեփ Արիմաթացու եւ Քրիստոսի բարեկամ Ղազարոսի հիշատակության օր:*

*22.10.2016. Տասներկու Սբ. Վարդապետների հիշատակության օր:*

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ ՎԹԱՐԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ ՄՈՍԿՎԱ-ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍԸ

*Հոկտեմբերի 14-ին՝ Մոսկվայի ժամանակով առավոտյան ժամը 04:30-ի սահմաններում, Հյուսիսային Օսեթիայում՝ Բեսլան քաղաքից 6 կմ հեռավորության վրա, վթարի է ենթարկվել ոչ կանոնավոր ուղեւորափոխադրում իրականացնող Մոսկվա-Երեւան ավտոբուսը:*



Վլադիկավկազ-Բեսլան շրջանցիկ ավտոճանապարհի 8-րդ կմ-ին «Մերսեդես Բենց-0404-15R» մակնիշի 50 AA 515 պետհամարանիշի մարդատար ավտոբուսը, Մոսկվա-Երեւան երթուղին իրականացնելիս, բախվել է «Սկանիա» մակնիշի բեռնատար ավտոմեքենային: Ըստ նախնական տեղեկությունների՝ ավտոբուսում եղել է 52 ուղեւոր:

Վթարի հետեւանքով կա 5 զոհ, 27 վիրավոր: Տուժածները, այդ թվում՝ 4 երեխա, անմիջապես տեղափոխվել են Վլադիկավկազ քաղաքի տարբեր հիվանդանոցներ: Երեխաներից մեկի վիճակը, բժիշկների գնահատմամբ, ծանր է:

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

## ՄԱՐՏԻՐՈՍ ԵԼԱԳՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՃՈՒՃԱՀԱՆԴԵՍԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Երեւանաբնակ գեղանկարիչ, Հայաստանի Նկարիչների միության անդամ, 39-ամյա Մարտիրոս Ելագյանը, թեեւ Թբիլիսիում առաջին անգամ էր ցուցադրվում, բայց, ինչպես անձամբ խոստովանեց, օտարության զգացում չուներ, քանի որ ինքը գտնվում էր նախնիների ծննդավայրում:*



Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում, հոկտեմբերի 9-ին ներկայացված իր 7-րդ անհատական ցուցահանդեսը նա նվիրել էր ուսուցչին՝ հայտնի քանդակագործ, Մոսկվայի գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանին (1923-2009 թթ.):

Հավաքածուում գեղանկարիչն ընդգրկել էր՝ տարբեր հոգեվիճակներ ներշնչող արվեստագետ ու սովորական մարդկանց դիմանկարների մի հոծ շարք, ներկայացված էին նաեւ կենդանական աշխարհին նվիրված գործեր: Շուրջ 30 կտավ, որոնք ներկայացված էին գծանկարի ժանրում: Շարքում տեղ էին գտել դերասան Սոս Սարգսյանի, բանասեր Համլետ Չոբանյանի, քանդակագործ Ղուկաս Չուբարյանի, կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի՝ ինքնատիպ լուծումով ներկայացված մի քանի դիմանկար:

Առանձնակի հետաքրքրությունը, որով դիտվեց ներկայացված հավաքածուն, պերճախոս փաստումն էր նրա, որ նկարչին հաջողվել էր հավատարիմ մնալ իր սկզբունքներին: Այս մասին ընդգծվեց Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեւոսյանի գնահատական խոսքում:

Վերջում, Մարտիրոս Ելագյանը խոստացավ հաջորդ ցուցահանդեսին, ի պատիվ ծնունդով թբիլիսցի իր հոր, ներկայանալ թիֆլիսյան թեմաներին նվիրված գործերով, որոնք այժմ ստեղծման պրոցեսում են: Մարտիրոս Ելագյանի ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ հոկտեմբերի 16-ը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՖՈՒՏԲՈԼ

## ԱՆՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

FIFA WORLD CUP RUSSIA 2018

*Անցկացվեցին աշխարհի 2018 թվականի առաջնության՝ եվրոպական խմբի ընտրական փուլի հերթական հանդիպումները:*

«D» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը, խմբի երկրորդ հանդիպմանը, Դուբլինում, 0:1 հաշվով զիջեց Իռլանդիայի հավաքականին, ապա մրցակցի դաշտում մեկ միավոր վաստակեց Ուելսի հավաքականի հետ հանդիպմանը: Վրաստանի թիմը, երեք հանդիպումից հետո, իր ակտիվում ունի մեկ միավոր եւ խմբում զբաղեցնում է նախավերջին՝ 5-րդ տեղը:

«E» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը բավականին անհաջող սկսեց իր ելույթները: Երկրորդ հանդիպմանը, սեփական հարկի տակ, հայ ֆուտբոլիստները 0:5 հաշվով պարտություն կրեցին Ռումինիայի թիմից, ապա Լեհաստանում զիջեցին 1:2 հաշվով եւ 0 միավորով եզրափակում է խմբի մրցաշարային աղյուսակը:

Նշենք, որ, այս վերջին պարտությունից հետո, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանը հրաժարական է տվել:

Խմբի հաջորդ հանդիպումը Վրաստանի հավաքականը կանցկացնի նոյեմբերի 12-ին, Մոլդովայի թիմի հետ, սեփական հարկի տակ:

Իսկ Հայաստանի հավաքականը նոյեմբերի 11-ին, իր հարկի տակ, կընդունի Չեռնոգորիայի ազգային ընտրանուն:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ



Լրացավ Վրաստանում, հատկապես, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում քաջ հայտնի պետական եւ տնտեսական գործիչ, Ախալքալաքիի շրջանային վարչության նախկին նախագահ Սերգեյ Դարբինյանի 70-ամյակը:

Ի սրտե շնորհավորում ենք այդ բարի, զգայուն, բարեհամբույր ու անմիջական անձնավորության հոբելյանը, մաղթում նրան երկարակեցություն, առողջություն, երջանկություն:

*Ախալքալաքցի եւ թբիլիսցի մի խումբ ընկերներ*

## Խ Ա Չ Բ Ա Ռ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Հունական այբուբենի տառ: 4.Աշունի նվագարան: 7.Հումորի աստղ ... Շիֆրին: 11.Թախիծ, զգացմունք՝ որեւէ մեկին երկար չտեսնելու պատճառով: 12.Մտքերով, խոհերով լցված: 14.Ջիու «կոշիկ»: 15.«... իմ անուշ ու անգին»: 16.Ձեռքի մատներից: 18.Խելագարը լոռեցիների համար: 19.... Մարինո, ... Դիեգո: 20.Չբեր, երեխա չբերող: 20.Պարկավոր կենդանի: 25.Սիրված դերասանուհի ... Ոսկանյան: 27.Առաստաղից կախված լուսատուն: 29.Եվգենի Պետրոսյանի կինը՝ ... Ստեպանենկո: 31.Երգչուհի Այոնա ...: 33.Տարբեր գույների: 34.... Յորք, ... Ջերսի: 35.Անձնական դերանուն: 38.Ասիական պետություն: 40.«Ու պիտի ... հանուր կյանքի արշալույսը վառ հագած» (Հովհ.Թումանյան): 42.Օպերային դերերգ: 44.Երգչուհի ... Սարիբեկյան: 47.Հ.Սահյանի ծննդավայր գյուղը: 48.Խոշոր քաղաք Սուդանում: 49.Գետ Ռուսաստանում: 51.Նիդերլանդացի հայտնի նկարիչ Վան ...: 52.Ժամանցի վայր՝ սրճարան- ...: 54.Արքայի աթոռը: 56.«... ճկնիկը» (մուլտֆիլմ): 57.Դայակ, կրծքով կերակրող: 59.Երաժշտական գործիք: 61.Միավորված ազգերի կազմակերպություն: 62.Հայ երիտասարդ երգիչ: 63.Ե'վ Բաբաջանյան, ե'ւ Գեւորգյան: 64.Խ.Աբովյանի հերոս:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Բագրատունի թագավոր: 3.Թղթախաղի տեսակ: 4.Եմենի քաղաքամայրը: 5.Հայկական օրանուն: 6.Ֆրանսիացի գրող Էմիլ ...: 8.Հայ ժողովրդի մեծ բարեկամ Անատոլ ...: 9.Հայկական ֆիլմ՝ «Զորի ...»: 10.Պայծառ աստղ: 13.Շատ ուժգին: 17.Նույնանուն ֆիլմի հերոսը: 18.Երկրաչափական մարմին: 21.... Գիբսոն: 23.Վիրահայ դաշնակահար ... Աբովյան: 24.Նորվեգացի կոմպոզիտոր Էդվարդ ...: 26.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված հայ վիպասան: 27.Ախալքալաքիի Կարծախ գյուղում ծնված Մեծն աշուղը: 28.Թբիլիսիում նշվում է հայկական այս կերակրատեսակի օրը: 29.«..., ... երազ լինեի, թռնեի մոտդ, մայրիկ ջան» (Ավ.Իսահակյան): 30.Մատների ծայրին: 32.Երգչուհի ... Եսայան: 36. ... Աբաս Կատինա: 37.Վրաց քաղաքագետ ... Բուրջանաձե: 39.Հայ հերոսների գերեզմանատունը Երեւանում: 41.Ե'վ Պուգաչովա, ե'ւ Լեւոնյան: 43.Լուսաբաց, արեւածագ: 49.... կամ Կապուտան լիճ: 50.Մողեսի տեսակ: 51.Հերոսուհի հնդկական «Գանգես, քո ջրերը պղտորվել են» ֆիլմում: 53.Վերդիի հայտնի օպերան: 55.Ամեհի, շատ մեծ: 58.Ունեմ, ունես, ...: 60.Հոգնակիակերտ մասնիկ: 62.Զարգացում, աճում:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 6.Կաքավ: 8.Պրադո: 10.Վիշտ: 11.Հոր: 13.Օրգան: 14.Առաքինի: 16.Ակոս: 17.Կոշ: 18.Օսկար: 20.Լանա: 21.Տիկ: 22.Ծմակ: 26.Արագ: 28.Սատար: 31.Տուն: 32.Կոճ: 34.Սոյա: 35.Եզակի: 36.Ծնող: 38.Աղբ: 41.Ձենք: 43.Սամարա: 45.Աստղ: 48.Կող: 49.Լեզու: 52.Երախ: 53.Ծառ: 54.Սեր: 55.Զգալ: 56.Դար: 57.Գիլա: 58.Կիեւ: 59.Կավ: 60.Միգ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Պատրաստ: 2.Սվին: 3.Ապտակ: 4.Փալաս: 5.Մոհիկան: 7.Ավազակ: 9.Շրիշակ: 12.Ոնոն: 15.Ռոտարու: 19.Կինտո: 23.Մատաղ: 24.Կանեփ: 25.Վրան: 27.Զոկ: 29.Ասեղ: 30.Այծ: 32.Կառե: 33.Ճիտք: 37.Որակ: 39.Բատրակ: 40.Նաղարա: 41.Զալ: 42.Նազելի: 44.Մոծակ: 46.Սեգ: 47.Ղալի: 50.Եսիմ: 51.Ուրագ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445